ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի,
HETQ.AM-Ի ԼՐԱԳՐՈՂ ՏԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան

Ի պատասխան Ձեր 29. 11. 2018թ.-ի թիվ 8DB8-D2FE-A6C2 առցանց գրության՝ ներկայացնում ենք ֆինանսների նախարարի աշխատասենյակում և հանգստի սենյակում առկա, ֆինանսների նախարարության հաշվեկշռում հաշվառված և անձնական գույքի վերաբերյալ տեղեկատվությունը (կցվում է 1 ֆայլ): Ինչպես նաև հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության տնօրինության տակ գտնվող Մելիք-Ադամյան 1 վարչական շենքում ընթացիկ վերանորոգման աշխատանքներն իրականացվել են 2014-2015 թվականներին, և վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներն իրականացվել են համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի՝ ընդհանուր ծավալներով:

Միաժամանակ տեղեկացնում ենք՝ անձնական գույքի ձեռքբերման ժամկետների և արժեքների վերաբերյալ տեղեկատվություն չենք կարող տրամադրել, քանի որ այն ձեռք է բերվել տարբեր տարիների ընթացքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

X _____

ՎԱՉԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ.՝ տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին, հեռ.՝ 011-800-325